



**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**  
**Հ Ր Ա Մ Ա Ն**

« 16 » « *օգոստոս* » 20 19 թ. № 275-ՇԿ

**ԾԱՌԱՅՈՂԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» օրենքի 22-րդ հոդվածով, կառավարության 2018 թվականի հուլիսի 19-ի N 814-Ն որոշման 10-րդ և 11-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի N 745-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 18-րդ կետի 20-րդ ենթակետը.

**Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ**

1. Նշանակել ծառայողական քննություն Արարատի և Արմավիր մարզերի ձկնաբուծական տնտեսությունների կողմից (ժամանակաշրջան 2017-2019թթ.) ջրային ռեսուրսների փաստացի վիճակի պահպանության նկատմամբ ուսումնասիրությունների ընթացքում հայտնի դարձած ապօրինի և ջրօգտագործման թույլտվությամբ սահմանված չափաքանակներից ավելի ջրառ իրականացման դեպքերով:

Ծառայողական քննության ընթացքում պարզաբանման ենթակա հարցն է՝

1) ուսումնասիրել տնտեսվարողներին տրամադրված ջրօգտագործման թույլտվությունով նախատեսված և փաստացի օգտագործվող ծավալների չափերը, ավել օգտագործելու դեպքում՝ պատճառները և հետևանքները:

2. Ծառայողական քննությունն անցկացվում է աշխատանքային խմբով՝

1) Աշոտ Ավայան - գլխավոր քարտուղարի տեղակալ, խմբի ղեկավար,

2) Լևոն Գևորգյան - իրավախորհրդատու նախարարի,

3) Լիլիթ Աբրիամյան – շրջակա միջավայրի պահպանության քաղաքականության վարչության շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և ջրային ռեսուրսների պահպանության քաղաքականության բաժնի պետ:

3. Ծառայողական քննությունը նշանակվում է սույն հրամանն ուժի մեջ մտնելու օրը:

4. Ծառայողական քննությունն անցկացվում է 30 օրացուցային օրվա ընթացքում՝ սույն հրամանը ստորագրելու պահից:

5. Ծառայողական քննությունը անցկացնել հանգամանքների ստուգմամբ, համադրմամբ, պարզաբանմամբ և արդյունքների հիման վրա սահմանված ժակետներում կազմել և ներկայացնել եզրակացություն:

ՆԱԽԱՐԱՐ

Է. ԳՐԻԳՈՐՅԱՆ

« 16 » օգոստոսի 2019թ.

Ք. Երևան